

5 SEP 2011

19 AUG 2006

Հ. ԶՈՐՅԱՆ

ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ  
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ X ԴԱՐՈՒՄ

(Արտատպություն Պետ. Համալսարանի № 4 Գիտական Տեղեկագրից)

9(47.925)  
8-83

1928 ՅԵՐ ԼԱՆ

7. 925)

-83

Տ. Կառավարության  
հետապնդության մասին  
թիվ 18/28/188:25/12/28/1.  
ՀիմնականՀ. ԶՈՐՅԱՆ

## ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ X ԴԱՐՈՒԽ

I

Խոսել X դարու Փեռգալական Հայաստանի զյուղացիական շարժումների մասին, նշանակում ե բացատրել այդ շարժումները ֆեռդ. Հայաստանի այդ ժամանակաշրջանի արտադրական յեղանակի, վերջինով պայմանավորվող տնտեսական հակաղությունների հիմքի վրա: Այս հիմնականը:

Մի ուրիշ կարեոր հանգամանք: Մեր կարծիքով, Հայաստանի անցյալի պատմությունը ուսումնասիրողները մեթոդական տեսակետից թողել են մի հիմնական բաց: Այդ բացը կայանում ե նրանում, վոր այդ ուսումնասիրողները բոլորովին աչքաթող են արել յերկիրների տյն կոմպլեքսը, վորի մեջ իր զարգացման պրոցեսն եր կատարում ֆեռդ. Հայաստանը և վորի մի փոքրիկ մասն եր հանդիսանում:

Անշուշտ, մեթոդական տեսակետից կատարված այդ անտեսումը սերտ կապ ե ունեցել և ունի անցյալի և ներկայի նման ուսումնասիրողների ներկայացրած գասակարգի շահերի և նրանց ընդհանուր աշխարհայացքի հետ:

Այս մասին առիթ կունենանք հանգամանորեն խոսելու վերջում:  
Ակադ. Բարտոլդը 1915 թվին գրել է հետեւյալը Անի քաղաքի զարգացման մասին:

«Համենայն գեպս միծ արդյունաբերական և առեւրական քաղաքը արագ վերածնվեց նոր կյանքի, ինչ վոր կապված եր այն կուլտուրական աշխարհի պատմական զարգացման ընդհանուր պայմանների հետ, վորում (այդ կուլտուրական աշխարհում) Անին և ամբողջ Հայաստանը մի փոքր անկյուն եյին կազմում: Ն. Մարի աշակերտներից մինը, ի. Ա. Որբելին արդարացի կերպով կապում է Անիի ծաղկումը Առաջավոր Ասիայի մուսուլմանական յերկիրների քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման հետ»:<sup>1)</sup>

Այս առղերում Արևելքի պատմության մասնակետ գիտնականը ֆեռդ. Հայաստանի անտեսական զարգացումը և նրա կրած հաջորդական փոփոխությունները իրավամբ վերցնում ե վոչ թե վորպես մի առանձին յերեցույթ, այլ շաղկապում ե Առաջավոր Ասիայի տնտեսական զարգացման ամբողջականության հետ:

<sup>1)</sup> Վ. Բարտոլդ, Зап. Вост. Отд. Р. З. А. Общ. т. XXII вып. I-II. 1915. стр. 408  
հմմտ. նաև И. А. Орбели, Развалины Ани СПГ. 1911, հայ. թրդ. Հուսիկ յեպիսկոպոսի կող  
մեջ «Պատրաս» ամսագրում 1911, № 4-8.

Արարական տիրագետության շրջանում փեռող. Հայաստանի տնտեսական կյանքում առաջացող շարժիչ ուժերը անբացատրելի պիտի մնային յեթե մենք նկատի չառնենք այդ ժամանակաշրջանի յերկու խոշոր առևտըրական կինտրոնները, Բաղդազն ու Բյուզանդիոնը, վորոնց միջև Հայաստանը իր աշխարհագրական դիրքով տարանցիկ առևտուրի հանգույց էր հանդիսանում:

Ճիշտ և, սկսած IX դարուց արարական հզոր խալիֆատի կենտրոնական իշխանությունը մանր ֆեոդալական իշխանությունների յեր գերածվում, սակայն, հյուսիսում և արևելքում բարգավաճման եյին հասնում այնպիսի քաղաքներ, վորոնք իրենց զարգացման աստիճանով գերազանցում եյին նախնի քաղաքները:

Այսպես, յերբ IX դարում Խորանանի Մերք և Նիշաբուր քաղաքները «դառնում են կուլտուրական խոշորագույն կենտրոններ», բարգավաճում էն Սեբգեգարը, Տուսը և Մեշխետը, յերբ X դարում կուլտուրական կյանքը աստիճանաբար Պաղտատից և Բասրայից անցնում է Պարսկաստանի խոշոր քաղաքները, Բեյ, Սփահան և Շիրազ, յերբ Շախրիսանի պատերի շուրջը տեղի ունեցող բազարը, քաղաքների զարգացման ընթացքում, զառնում է իսկական քաղաքը,<sup>1)</sup> չեյին կարող այս բոլոր փոփոխությունները իրենց անդրադառնումը չունենալ փեռող. Հայաստանի այն քաղաքների վրա, վորոնք տնտեսական տեսակետից մտնում եյին այդ ցանցի մեջ:

«Շահաստան Դիլնը»<sup>2)</sup>, «Հղիացած Կարսը»<sup>3)</sup>, «Հոյակապ և ականավոր» Արծն և Անի քաղաքները<sup>4)</sup>, վորոնք «բազում առատությամբ հարըստացել են ծովից և ցաւաքից», Խաթ «միջազգային» քաղաքը, ուր հավասարապես խոսվում էր արարերեն, պարսկերեն և հայերեն<sup>5)</sup> պարզ և զոր V/II դարից մինչև XI դարու փեռող. Հայաստանի այդ քաղաքների բարգավաճումը կարելի յերացարել և ըմբռնել հարեան յերկիրներում տընտեսական ասպարեզում առաջացող փոփոխություններով:

Քաղաքների բարգավաճումը Առաջավոր Ասիայում և փեռող. Հայաստանում, իրենց անդրադառնումը ունեցել են թե տվյալ յերկը արտադրական յեղանակի և թե վերջինով պայմանակորդող արտադրական հարարերությունների վրա. Այդ ժամանակաշրջանի քաղաքները, վորպես զյուղի շահագործման կենտրոններ, առաջացրել են ուժեղ հակազրություններ մի կողմից քաղաքի և զյուղի միջև, մյուս կողմից քաղաքի պղպարնակության այլ դասակարգերի միջև. Այդ հակաղությունները հանգել են իրենց պատմական վախճանին առաջացնելով մի շարք ապստամբական շարժումներ:

<sup>1)</sup> Վ. Բարտոլդ, Կուլտուրա Մուսուլմանության. Պետրոգրադ, 1918. стр. 60, 63, 65, 73.

<sup>2)</sup> Փ. Արդրութի լլ դր. Ի. Եջ 230.

<sup>3)</sup> Արխան. Լաստիվեռացի, դր. Ժ. Եջ 61.

<sup>4)</sup> Ibid., դր. Ի. Եջ 53.

<sup>5)</sup> Relation de voyage de Nassiri Khosrau, trād. fr. par Ch Schefer, Paris 1891 p. 21-22

Ակադ. Բարտողյան «Պարսկաստանի գյուղացիական շարժումների պատմության մասին» վերնագրով 1923 թվին լույս ընձայած իր մի հոդվածում շահեկան տեղեկություններ եւ հաղորդում, սկսած V դարուց, Պարսկաստանում կրօնական գրոշի ներքո տեղի ունեցած գյուղացիական շարժումների մասին:<sup>1)</sup>

XI և XII դարերում Առաջավոր Ասիայում տեղի ունեցած իսմայիլական շարժման մասին իր «Մուսուլմանականության կուլտուրան» հայտնի աշխատության մեջ զբում է նույն գիտնականը:

«Բայտ յերկույթին, կրօնական գրոշի ներքո պայյքար եր տեղի ունեցել զյուղի և քաղաքի միջև, քաղաքի ազգաբնակության արիստոկրատական տարրերի միջև:<sup>2)</sup>

Հայտնի յե, վոր Պարսկաստանում առաջացրող Մանիի և Մազտակի կրօնական աղանդները գտել են իրենց արձագանքները Հայաստանում մանիքյականության, մձնեսության, պավլիկյան կամ պողիկյան աղանդներ անվան տակ Արանց հաջորդ հանդիսանում է թոնդրակեցիների աղանդը:<sup>3)</sup> Մեր այս ուսումնասիրության մեջ խոսելու յենք վերջին աղանդի մասին: Ինչ վերաբերում է V դարուց սկսած աղանդներին, և նրանց կապը անտիսական պատճառներից առաջացած շարժումների հետ, մեր կարծիքով կարու և գեռս հատուկ ուսումնասիրության: Այդ ուսումնասիրությունը կատարել հասարակոր կը լինի միայն այն ժամանակ, յերբ խնդրո առարկա ժամանակաշրջանի փեռող. Հայաստանի տնտեսական դրությունը կը պարզվի:

Այսպես, փեռող. Հայաստանը տնտեսապես Առաջավոր Ասիայի հերկիւնքի ամբողջականության մի փոքրիկ մասը լինելով, թե տնտեսական և թե հասարակական տեսակետից չեր կարող առանձնանալ այդ ամողջականությունից:

Առանաբարակ, Առաջավոր Արևելքի տնտեսական դրությունը գեռ ևս կարու և լուսաբանության: Կարծում ենք, վոր Փեռող. Հայաստանի (ամբողջականության մի մասի) տնտեսական և հասարակական կյանքի պատմության նվիրված ամեն մի ուսումնասիրություն վորոշ լույս կը սփոթ նաև Առաջավոր Արևելքի հասարակական կյանքի վրա: Այս տեսակետից, նման ուսումնասիրությունները կստանան կրկնակի նշանակություն:

Մեր այս ուսումնասիրության համար վերին աստիճանի ուշադրության արժանի յե ակադ. Բարտողյանը, թե իսմայիլական

<sup>1)</sup> Из далекого и близкого прошлого-Сборник этюдов из всеобщей истории и честь 50 летней научной жизни Н. И. Кареева. Москва 1923. стр. 54—62.

<sup>2)</sup> «Повидимому, под знаменем религии происходила борьба между деревней и городом и между аристократическими и демократическими элементами городского населения». В. Бартольд, Культура Мусульманства, стр. 77.

<sup>3)</sup> Պրաֆ. Լենի իր մի հոդվածում, վոր բնդհանուր բնույթ և կրում, Հայաստանում առաջացած այս աղանդավորական շարժումները ներկայացնում են վորպես սոցիալական շարժումներ. տես «Նորք» №1, 1922 Եջ 130/51,

շարժումը XI և XII դարերում իր հիմքում կրում եր տնտեսական հակառակություններ, քանի վոր այդ շարժումները իրենց ձևի տեսակեալից հիշեցնում են նաև գյուղացիական այն շարժումները, վորոնք կատարվել են X դարում ֆեոդ. Հայաստանում:

## II

«Թեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակառակության» մասին գրված մի ուսումնասիրության մեջ աշխատել եմ յերեան հանել արարական տիրապետության և Բաղրատունիների շրջանում ֆեոդ. Հայաստանի արտադրական հարաբերություններում առաջացած փոփոխությունները և գյուղացիական դասի շահագործման սաստկացումը, ինչպես և նրանց տնտեսությունների քայլայումը<sup>1)</sup>

Ստեղծվել եր քաղաքի և գյուղի միջև ուժեղ հակառակություն:

Ֆեոդալական արտադրության շրջանում, յերբ տնտեսական կյանքում առաջացած փոփոխությունները կատարվում ելին վերին աստիճանի դանդաղ, պարզ և վոր այդ զարգացման պրոցեսը, վորին մենք հետեւում ենք մեր վերև հիշված ուսումնասիրության մեջ մինչև XI դարու կեսը, առավել կամ նվազ չափով պատկերացնում են նաև այն ժամանակաշրջանը, վոր մեր այս ուսումնասիրության առարկան և հանդիսանում:

Արդյոք ֆեոդ. Հայաստանի հասարակական կյանքում առաջացած այդ հակառակությունները ունեցել են յերբ և ից իրենց արտահայտությունը, Յել յեթե այս, յերբ, վերտեղ և ինչ ձեռք ե յեղել այդ:

Ահա այն հիմնական հարցերը, վորոնց պիտի աշխատենք պատասխանել:

Խոսքը տալիս ենք այդ գեղքերի ժամանակակից պատմիչին՝ Հովհաննես Դրասխանակերտացիին.

«...և ծառայքն...հնարեին՝ զի զափարս տրեխաւորեալ ի զետանի գնացուցեն, և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաթուր հարողս, խրոխտացեալք մեծաւ ապստամբութեամը»:<sup>2)</sup>

Այսպիսի արհամարհական տոնով և նկարագրում հոգեոր ֆեոդալը, այդ ժամանակի կաթողիկոսը, ձնշված դասակարգի ապստամբությունը: Այլ կերպ ել չեր կարելի նրանից սպասել Սակայն, կարեորը այս չե:

Յերբ և ինչ հանգամանքներում եր առաջանում այդ ապստամբությունը: Ահա այն հիմնական հարցերը, վորոնց պարզաբանումը մեզ հնարավորություն կտա պատմիչի այս և հետագա նկարագրությունները հասկանու:

Հովհաննես Դրասխանակերտացին, ինչպես իր ամբողջ պատմության ընթացքում, այստեղ ևս չի հիշատակում թվական: Սակայն, վորոշ և, վոր այդ գեղքերը՝ պատահում են Սմբատ Բաղրատունիի մահից հետո և այն ժամանակ, յերբ պատմիչը գտնվում եր դեռ ևս Հայաստանից զուրս, Գու-

<sup>1)</sup> Տես «Գիտության և Արքասի ինստիտուտ»-ի № 2, 3 տեղեկագրերը:

<sup>2)</sup> Հովհ. Պրասիսակիս: ատցի, Դ. Եղ. Եղ 324.

գարաց թագավոր Աստրներսէի մոտ: Այս յերկու հանգամանքները գալիս են ասելու, վոր այդ ապստամբությունը տեղի յեր ունենում 913/14—918 թվականների միջև:<sup>1)</sup>

Ուշագրավ ե, վոր Սմբատ Բաղրատունիի հողամասերի վրա ծայր առնող այս ապստամբական շարժման զուգացիպում են Սյունիքում յեկեղեցական կալվածների շուրջ ծագած գյուղացիական ապստամբությունները:

Սա. Որբելյանը, վոր Տաթեի վանքում գոյություն ունեցող վավերագրերի հիման վրա նկարագրում ե Սյունիքում տեղի ունեցած գյուղացիական ապստամբական շարժումները, վորոնց մասին ստորև կը խոսենք, առաջին ապստամբության մասին տալիս և 915 թվականը:

Անձագանական չե, վոր Սմբատ Բաղրատունիի հողամասերի վրա ծագած ապստամբությունը, վոր բավականին խոշոր համեմատություններ և ստացել, կապ չունենար Սյունիքում ծագած այդ ապստամբությունների հետ. Յեթե մեր այս յենթագրությունը ճիշտ ե, ապա ուրեմն այդ ապըստամբությունը տեղի յեր ունենում 915/16 թվականին:

Նախ քան ապստամբության բնույթի և նրա պատճառների վերլուծման անցնելը, տեսնենք թե ինչ եյին ներկայացնում իրանցից X դարու առաջին յերկու տասնամյակները տնտեսական և հասարակական տեսակետից:

Արարական տիրապետության շրջանից սկսած, IX դարու վերջին քառորդին, ֆեոդ. Հայաստանի հողային սեփականությունների շուրջը ստեղծվել եյին բոլորվին նոր դասավորումները: Մի շարք նորարարական տներ կորցրել եյին իրենց հողամասերը և գաղաքել եյին քաղաքական կյանքում վարիել զեր խաղալուց: Այդ շարքում եյին գտնվում Մամիկոնյան, Կամսարական, Սահառունի, Ռշտունի և Գնունի նախարարական տները: Իսկ մյուս կողմից Բաղրատունի, Արծրունի և Սյունիքի նախարարական տները կարողացել եյին կլորացնել և ընդարձակել իրենց հողային սեփականությունները, Մի շարք այլ մասն իշխաններ դարձել եյին վասսալներ վերջին այս նախարարական տներին:<sup>2)</sup>

Այդ ինքնիշխան ֆեոդալները, վորոնք հովանավորվում եյին կաթողիկոսի և յեպիսկոպոսների կողմից, ի հաշիվ գյուղացիական սեփականությունների վարձատրում եյին հոգեոր և աշխարհիկ իշխաններին իրենց մատուցած ծառայությունների համար, ինչպես այս ցույց են տալիս Սա. Որբելյանի պատմության մեջ բերքած վավերագրերը և Վիմական Տաթե գրում ամփոփված արձանագրությունները:

Յերկրորդ կարեօր հանգամանքը, վոր անհրաժեշտ և այստեղ ընդգծեն այդ այն ե, վոր մինչև այժմ Բաղրատունիների կարծեցյալ և ան-

<sup>1)</sup> Սամուել Անեցի, Եղ 98. Հովհ. Պրասիս: Դ. Եղ. Եղ 273/74, Գլ. Եղ 327 332. Հմմտ. Կառլ Դահիեսչյան, Գրնացների համար Ասոտ Բագրատուն. Berlin 1893. Diss. Մագալիս Օրմանյան, Ազգականում, § 712 Եղ 1038, § 720 Եղ 1046.

<sup>2)</sup> Տես հողային սեփականությունների շուրջը առաջացած այս փոփոխությունների մասին մեր հողվածը «Գիտության և Արքասի ինստիտուտ» № 2 Տեղեկագրու, մեջ 180/190.

կախ թագավորությունը՝ փաստորեն կրկնակի հարկատու եր արար խալիքներին և Աղքարեջանի եմիրին, Յեկ յերբ Սմբատ Լը ստիպված ե լինում Աղքարեջանի եմիր Յուսուփին 60,000 դահեկան վճարելու համար ծանր հարկեր դնել, նախարարների դժգոհությունը փոխվում ե ապստամբության:<sup>1)</sup>

Վոր առնասարակ, արարների գանձած դրամական հարկերը գյուղացիության շահագործումը շատ խոշոր չափերի յեր հասցերեւ, այդ ցույց է տալիս «արարական հարկային քաղաքականության» մասին մեր կատարած ուսումնասիրությունը: Յեթե այդ շահագործումները գյուղացիության կողմից տնօւր տառապանքներով տարվել են, ապա մի այնպիսի վայրում, ուր բանվորական մեծ բազմություն ե տեղի ունեցել, այդ շահագործումները պատասխանվել են ապստամբություններով:

Մենք թույլ ենք տալիս այստեղ մի շեղում կատարել նկարագրելու այդ բանվորական ապստամբությունը, վոր տեղի յե ունեցել VIII դարու 70-ական թվականներին: Յեկ այս յերկու պատճառով. նախ վոր արդ ապստամբությունը կազմում ե հաղափոխական շարժումների մի կարեռ եղը, յերկրորդ՝ հանդիսանում ե իլյուստրացիա ֆեոդալական թերզությունի կատարած շահագործության մեջ (ներքին թե արտաքին) կատարած շահագործումների:

Այդ բանվորական ապստամբությունը, վորի մանրամասն նկարագրությունը գտնում ենք Սուրբացի պատմիչ Դընի զը Դել-Մահեյի մոտ, պատահում ե Չորրորդ Հայքում<sup>2)</sup> Տուտիս կոչված վայրում: Այստեղ գտնվում եր կապար, արձաթ և ուրիշ յերկաթե հանքեր: Շրջակա հողագուրկ գյուղացիությունը այն աստիճանի թշվառության ե յենթարկվում, վոր գնում ե գեպի կապարի հանքերը իր ֆիզիքական գոյությունը պաշտպանելու: Տրված լինելով ֆեոդալական շրջանի տեխնիկայի ցածր աստիճանը, պարզ ե վոր այդ հանքերի շահագործումը հնարավոր եր միայն աշխատանքի սարկացումով:<sup>3)</sup>

Կարձ ժամանակամիջոյաւմ, —շարունակում պատմիչը, —այնքան բնակչություն ե կուտակվում, վոր իշխանությունը նշանակում ե հատուկ կառավարիչ: «Խոր և մեծ փոսեր եյին փորում կապար փնտուելու համար»:

Ապստամբության վորպես պատճառ ցույց ե տրվում այն սոսկալի հարկերը, վորոնք զանձվելիս են յեղել այդ ժամանակ:

«Յերբ խեղճերը անսահ, վոր այս տիրող ավագակությունը վերջ չի գտնում, ... վոր այս յերկամասում կատարված չարիքների համար հաշիվ չեր պահանջում, ապստամբվում են: Մենք տվինք մեզ ե մոք հարեւանների համար, —ասում են, վճարեցինք մեր հարկը և այն վոր պարտավոր չեյինք: Յերբ են հագենալում մեր մասից: Մենք վոչնչ չենք տալու այլևս, վորովհետեւ չենք իմանում թե վարտեղից առնենք նրանց տալու»:<sup>4)</sup>

1) Տես Պետ. Համալսարանի № 2-3 Տեղեկագրում մեր հոդվածը, էջ 338 շար.

2) Հմմտ. այս մասին K. Margx, Das Kapital I., III, Absch. K, 82 էջ 185.

3) VI թիվ Chronique de Denys de Tell-Mahré trad. par L. B. Chabot, Paris 1895. էջ. 172—175.

Կառավարիչը ապստամբների վրա բանակ և ուղարկում: Սկսվում ե սպանությունը: Կապարի հանքերում աշխատող բանվորները զիմում են փախուստի և ձմբան ձյունին ու ցրտին նրանց ապստամբությունը արյան մեջ և խեխտվում:

Այս ապստամբությունը ընկնում է 770—775 թվերին:

Արաբական հարկային քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրության մեջ գրել ենք. «Աս-Սաֆֆա (770—775), նրա յեղբոր և հաջորդի՝ ալ-Մանսուրի (775—775), արասյան առաջին խալիքների որով, Հայաստանում կյանքը գանում ե անտանելի»: (Պետական Համալսարանի «Գիտ. Տեղեկ» № 2—3 էջ 329): Ժամանակակից Դեսնդ պատմիչնեց բերել եյինք մանրամասն վկայություններ այդ մասին: Չորրորդ Հայքում ծագած ապստամբությունը, ինչպես սուրբիցի պատմիչն ե հաղորդում, անմիջական կապ ունի այն ընդհանուր դրության հետ, վոր ստեղծվել եր արբայան առաջին խալիքաների որով, այն ժամանակ յերբ նոր եր կառուցվել Բաղդադը և վորի առասպելական զարձած փարթամությունը կատարվում եր և հաշիվ գյուղացիության և բանվորության արյուն-քըրտինքի:

Յերբորդ. Փեռդ. Հայաստանի X դարը հատկանշական ե նաև այն տեսակետից, վոր ստեղծվում ե քաղաքների իշխանություն: Դվինը, Անին, Արծնը, Կարինը, Կարսը Հայաստանի հյուսիսում՝ Վանը, Խլոթը և ուրիշներ հարավում՝ տարբանցիկ առեսուրի շնորհիվ կարողանում են զարգանալ, և բարգավաճել այնպիս, ինչպես Աստաղավոր Ասիայի մի շորք քաղաքները, վորոնց մասին խոսել ենք վերևում:

Իսկ քաղաքների աճումը նշանակում եր այս շրջանում առետրական և սրան անբաժան ընկեր վաշխառուական կապիտալի կուտակումը, մի կապիտալ, վորի սուր կողմը ուղղված եր գյուղացիական մանր տնտեսությունների դեմ:

«Ժամանակի ընթացքում քաղաքի ազգաբնակության վերին խավերում, այնքան վորքան համատություններից մինը, վորին հանգել ենք փեռդ. Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակագրության մասին կատարած մեր ուսումնասիրության մեջ:

Այսպես, հողային սեփականությունների վորքաթիվ, սակայն ուժեղ փեղալների ձեռքում կենարոնացումը, արտաքին և ներքին փեղալների կողմից մեծ չափերով զրամական հարկերի գանձումը, բարգավաճող քաղաքները և նրանց մեջ կուտակվող առեսուրական և վաշխառուական կապիտալը և այս բոլորի հետեւանք՝ մանր գյուղացիական արյանտեսությունների քայլայումը և նրանց ստրկացումը, ահա այն տնտեսական գրությունը, վոր գոյություն ուներ ուսումնասիրության նյութ այս ժամանակաշրջանում:

1) Ֆեռդ. Հայաստանի առետրական և վաշխառուական կապիտալի մասին առ մեր ուսումնասիրությունը Գիտ. և Արվ. Խնամ. № 3 Տեղեկագրում:

Քյուղացիության տնտեսական այս ծանր դրությունը, անտարակույս, հանդիսանում էր ապստամեռություն կատարելու հիմնանան շարժիչ ուժ: Սակայն, այս դեռ բավական չեր ճնշված զյուղացիության գենք բարձրացնելու իր շահագործողների դեմ: Հարկավոր էր յերկրորդ մի այլ եական պայմանի գոյությունը:

Զորբորդ. Փեոդ. Հայաստանի խոշոր Փեոդալները X դարու առաջին յերկու տասնամյակում ապրում եյին քաղաքական կրիզիսի շրջան: Այդ կրիզիսը իր ամենասուր արտահայտությունը ստանում էր, յերբ այս ժամանակաշրջանի Բագրատունի խոչոր Փեոդալը Դվինում Աղբբեյջանի Եմբրի կողմից սպաննվում էր 913/14 թվականին:

Տեղացի Փեոդալների ապրած այդ քաղաքական կրիզիսը ուներ իր բազմաթիվ պատճառները:

Տկարացող արտաքական պետությունը և տեղացի Փեոդալների միջև իշխանության շուրջն ստեղծված պայքարները գեռ ևս IX տարու 90. ական թվականներից ֆեոդ. Հայաստանում առաջացրել եյին արտաքական և բյուզանդական որիենտացիայի շուրջը հակոսնյա գրություններու Արծրունի և Բագրատունի նախարարական տների միջև մղված պայքարը, Մբատ Լի Աղբբեյջանի եմիրի գեմ յերկար տարիների ընթացքում վարած պատերազմները որիենտացիայի շուրջն ստեղծված հակոսնյա գրությունների հետեւնք եյին: Վոր այդ պայքարները մեծ չափով տկարացրել եյին տեղացի Փեոդալներին Բագրատունի թագավորի վասարալներին այդ մասին ունենք հետաքրիեր վկայություն Հովհ. Դրասխանակերտցիի մոտ.

«Այլ և համազունք ևս արքային մերոյ՝ (ակնարկվում և Սմբատ Բագրատունին) իշխանք և կուսակալք և պետք ոմանք, սպառեալք էին ի խարդաւանական մասու յոստիկանէ անտի ըստ նախապատում իմոյն ըանի..»<sup>1)</sup>

Նվազ գեր չեր կատարում Փեոդալների տկարացման ուղղությամբ տեղացի իշխանների պայքարները և մասնավորաբար, մի շարք հարկատու իշխանների ապստամբությունը Սմբատի Լի ղետ, 908/09 թվին զրված ժամը հարկերի պատճառով, մի ապստամբություն, վոր վերջանում էր ապստամբ իշխանների պարտությամբ:

Տարիների այս պայքարը վերջանում էր, ինչպես առացինք, Սմբատ Բագրատունիի կատարյալ պարտությամբ: Սակայն, որիենտացիայի շուրջը մղվող պայքարը ստանում էր ավելի սուր բնույթ՝<sup>2)</sup>, յերբ Աղբբեյջանի եմիրը Հայաստանի Արծրունի Փեոդալների իր համար կատարած ծառայությունները վարձատրում էր լիուլի և այս կերպով Սմբատի հայջորդի Աղոստ

<sup>1)</sup> Հովի. «Թրասիս», Գլ. ԾԲ. եջ 293, հմտ. նահ Դաշնական Գրինդաց ս. 8  
Berljin 1893.

<sup>2)</sup> Քյուղանդական որիենտացիայի մասին ուշագրավ վաստաթուղթ և հունաց ուղարքին նիկուլաս Միստիկոսի (Ա մնամ պատրիարք 912—925 թ. թ.) նամակը ուղղված Հովհ. Կաթողիկոսին և վերջինի կատարած ջանքերը այս ուղղությամբ: Հովի. «Թրասիս».

Բագրատունիի և Արծրունիների միջև սուր պայքար և տեղի ունենում իշխանության շուրջը:

Ստեղծված այդ գրության մասին Սամուել Անեցին իր հատուկ լակոնական վոճով այսպես և գրում:

«ԶօդԶ (916 թ.) հայոց անիշխանութիւնն ամս է (7)»<sup>1)</sup>

«Հայոց անիշխանությունն», անա այն հիմնական յ. թիւրութ պայմանը, տեղացի Փեոդալների տկարացումը, վոր հնարավորություն և տալիս ճշնշված զյուղացիության, վորը ամենայն հավանականությամբ, այդ պայքարների ընթացքում գտնվում էր զինված դրության մեջ, կարողանում է ոգտագործել ստեղծված քաղաքական կրիզիսը:

Այժմ վերադառնանք ժամանակակից պատմէչին:

Ուրեմն, «Ճառանակը հնարում եյին, վոր տերերը տրեխ հագած գնան և իրենք մեծ արստամբությամբ իրոխտացած՝ վիզը տնկած ձիերի վրա բարձրանանան»:

Այստեղ ուշագրավ ե «Ճառայ» տերմինը, վոր Փեոդ. Հայաստանում զործ և ածկել անտեսապես և անձնապես իշխաններից կախյալ զրության մեջ յեղող մարդկանց համար: <sup>2)</sup>

Պատմիչի հետեւյալ վկայությունը մի կողմից կոնկրետացնում է, թե ովքեր եյին այդ «Ճառանակը», իսկ մյուս կողմից բացատրում է թե ինչու ուղաջանում էր այդ ապստամբությունը.

«. . . իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք զորս ի բնէ նախարարութիւնքն էին, ջանային վարատել և խելել իւրաքանչիւրոցն ընակութեանց, և ըստ ախործից իմն ձեռական և նոր ստեղծանել պայտապատու և սպասալարու:»<sup>3)</sup>

Յերբ վերջիշենք վերև հարեքին և արտաքին Փեոդալների միջև մղված պատերազմների մասին մեր ասածները, այս ժամանակ պատմիչի այս մութ խոսքերը կը լուսավորվեն: Պարզ է, վոր «Թագավոր» և «Իշխան» Փեոդալների համար կավող հավատարիմները իրենց ծառայության համար պետք և վարձատրվեյին. և նրանք վարձատրվում եյին ի հաշիվ զյուղացիական հողաբաժինների, վորոնց վես աշխատազները «Ճառա» եյին զանում տերերին ստեղծված նոր զույգային հարաբերությունների պայմաններում:

Հոգևոր Փեոդալը լուսավորվե և անցնում բոլոր այն հոգային նվիրավությունների մասին, վորոնք արվում եյին այս ժամանակաշրջանում յեկեղեցիին աշխարհիկ Փեոդալների կողմից «հոգվո վրկության» համար: Այս մասին ուշագրավ և Սյունիքում կատարված ապստամբությունը:

Ուրեմն, իրենց «բնակություններից քշվողները», վորոնք «Ճառանակի»

<sup>1)</sup> Օամուել Ա. Ենցի, Վաղարշապատ 1893, եջ 98.

<sup>2)</sup> Պրոֆ. Հակ. Օամբանդյան. Դիտողություններ եին Հայաստանի շինականների զրության մասին. Պատ. Համալսարանի Գիտ. Տեղեկագիր № 1, լ. Karst Zeitsch. f. vergl. Rechtschw. Bd. XX. s. 16.

<sup>3)</sup> Հովի. «Թրասիս» ակերական շաբաթական գրացիալի մասին առաջին համար, Լաստիվերացիի մոտ Գլ. ԾԲ. եջ 324. նման մի ուշագրավ վկայություն գտնում էնք Արիստ, Լաստիվերացիի մոտ Գլ. ԾԲ. եջ 54. «Ճառանակական աղքատացն, և սահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատանքն. . .»:

սոցիալական դրության եյին իջնում, պատեհ մոմենտին ապստամբություն եյին բարձրացնում իրենց անցյալի սեփականություններին տիրանալու նպատակով:

Այդ շարժումը ավելի եր խորանում, յեթե վերե հիշված յերեք տնտեսական պատճառների ազգեցության նրբք առհասարակ արտադրող գասի, գյուղացիության, անտեսական և սոցիալական դրությունը որ բայ որի վատթարանում եր:

Ուշագրավ են այն վորակումները, վորոնք տրվում եյին «ծառաներին». «անկատար», «յիւրոց», «ընդ հարկին անկելոց»: Արաբական այն ասացվածքը, թէ «մենկի հետ կոչտ վարվել այնպես, ինչպես գյուղացու մարդու հետ», անշուշտ հիմնավորվում ե գյուղացու տնտեսական դրությամբ:

Ահա այդ ճնշված դասակարգն եր, մեր կարծիքով, վոր վոտի յերկանդնում իր շահերի պաշտպանության համար: Այս հաստատվում ե շարժման ստացած ծավալով: ահա թե ինչպես ե նկարագրում պատմիչը:

«Այլ և եղբայր ընդ եղբօր, և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ՝ ի նախած և ի չարակնութիւն և ի գրգռութիւն, և ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին: Եւ այսպէս համագունդ ընդ միմի. անս հարեալք ի հակառակութիւն և ի կուր պայքարէին, և միշտ սուր յազդեր ունելով, բազում ևս քան զթշնամիսն հեղուին ի միմեանց զարեան ճապաղիս: Եւ առ հասարակ զքաղաքս և զդիլս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց»<sup>1)</sup>

Մեր առաջ պարզվում ե իսկական քաղաքացիական մի կովի պատկեր, վորի այլ պատճառը Ասողիկ պատմիչը բանաստեղծական կերպով հետեյալ տողերում արտահայտում ե.

«Այլ յորժամ գիրացաք, ստուարացաք, լայնացաք՝ և անկուշեցաք, ... քահանայք և ժողովուրդք, մեծամեծք և փոքրունք բամբասեցան ի լիութիւն հացի և ի յդփութիւն զինոյ...»<sup>2)</sup>

Այստեղ ցոլանում ե հակադրության այն պատկերը, վորը ստեղծվե եր քաղաքի և գյուղի միջն:

Նույն այդ նկարագրությունից վորոշակի յերեռում ե, վոր «ծառաների» այդ պաստամբությունը ընդգրկել ե քաղաքներ, գյուղեր և ավաններ: Այսինքն՝ նա չի յեղել տեղական, սահմանափակ յերկրամասի վրա կատարված մի արստամբություն, այլ այդ շարժումը ընդգրկել ե առնվազն Սմբատ Բագրատունիի ժամանակաշրջանի Բագրատունիների հարուստության յերկրամասերը: Անտարակույս, նման մի խոշոր ապստամբություն չեր կարող առանց արձագանքի մնալ նաև այն վայրերում, վորոնց իշխանները վորոշ կախյալ դիրքում եյին Բագրատունի թագավորների հանդեպ: Այդ մասին մենք ունենք վկայություններ միայն Այունիքից:

Բագրատունիների հողամասերի վրա ծագած այս ապստամբության

<sup>1)</sup> Ճողի. Թրասի. Գլ. ԾԲ. Էջ 324.

<sup>2)</sup> Ասողիկ, Խլ, Գլ. Գ. Էջ 162 Պետերուրդ 1885.

մասին Գաղրաշյանը հետեւյալն է գրում.

«Մի ապստամբություն, վոր մոռավորապես 916 թվին առաջացավ՝ հայ գյուղացիության կողմից աղնվականների գեմ, Հովհ. Կաթողիկոսի կողմից վորպես թեթեամտություն և անսատվածություն խարանգում եւ»<sup>1)</sup>

Աշխարհիկ ֆեոդալների հետ համանման շահերով կապված հոգեորդ ֆեոդալի կողմից պարզ ե, վոր նման մի ապստամբություն այլ վորակում չեր կարող ստանալ: Իսկ մեր ժամանակների պատմաբանները տարիներ լուսական գարմանալի չե, վոր մեր որերի պատմիչ J. de Morgan-ը վոր հայ բուրժուազիայի ապարանքի վրա Յեկուպային պրոպականդա անելու նպատակով 1919 թվին գրել է «Histoire du peuple arménien» աշխատությունը, հետեյալ բառերով և վորակում այս գյուղացիական ապստամբությունը,

«Այս ժամանակներում . . . Հայաստանը ամեն տարի ավերվում եր մուսուլմանների և հայ գյուղացի ավագակների կողմից, վորոնք աս պատակում եյին յերկրը»<sup>2)</sup>

Այսպես ե գրվել մինչև նորագ ւյն ժամանակները ֆեոդ. Հայաստանի պատմությունը:

Ապստամբության մասին այն մեջբերումները, վոր մենք արեցինք, կրում են Հովհ. կաթողիկոսի պատմության մեջ հետեւյալ վերնագիրը. «Յաղագս յառնելոյ օտար ազգաց ի վերայ երկրի մերում, և անմիաբանութեան նախարարաց մերոց ընդ իւնեարս:» Այս վերնագիրը կարող ե շփոթություն առաջացնել: Սակայն, պետք ե ասել, վոր այդ վերնագիրը վոչ թե պատմիչի կողմից գրված ե, այլ՝ մեր կարծիքով, հետագա գրիչների գործ ե. վորովհետեւ Յերուսաղեմի 1867 թվի յերկրորդ հրատարակության սկզբում հրատարակիչը մեզ հայտնում ե, վոր գոյություն ունեցող վեց գրչագրերից միայն յերկուսը բաժանված են յեղել գլուխների և ունեցել վերնագրեր: Յերուսաղեմի առաջին հրատարակությունը տպագրվել ե տուանց գլուխների և վերնագրերի:

Հովհ. կաթողիկոսը իր պատմության ընթացքում յերբ նկարագրում է հայ նախարարների ուսար իշխողների, թագավորական տան զեմ մղած պայքարները և կամ հայ նախարարների միմյանց միջն տեղի ունեցած կրկները, նման գեպքերում պատմիչի կողմից ձշդիվ հիշատակվում են նախարարների անունները և կովի վայրերը: Ներկա գեպքում պատմվածքի ընդհանուր ձեր մեզ հայտնագործություն ե տալիս յենթագրելու, վոր այս ընդհանուր ինդրի բնույթ և կրում:

Վոր այդ իսկապես ընդհանուր գյուղացիական մի ապստամբություն ե յեղել, այդ պապացուցվում ե նաև այն համատարած սովոր նկարագրությամբ, վոր հաջորդում ե անմիջապես այս գեպքերի նկարագրությունից

<sup>1)</sup> Daghbaschian, Gründung u. s. w. s. 102.

<sup>2)</sup> J. de Morgan; Histoire du peuple arménien. Paris 1919 p. 138: «Pendant cette période, l'Arménie était chaque année dévastée par les musulmans et pas les bandes de paysans arméniens qui infestaient le pays».

հետո, Բավական և մեջ բերել այս մասին այն, ինչ վոր ռասսիումովք և ռապրասափումովք ասում եւ պատմիչը:

« . . . զի մարդք հաւատարիմք ստուգեցին մեղ զբանս ճշմարիտ, եթէ մարդք ուսանք զսովամահ որդւոց իւրեանց զմարմինս ի կերակուր իւրեանց պատրաստեցին»: (Հովհ. Դրասի. Գլ. ԾՊ. եջ 329):

Ըստ յերեւոյթին նման սոսկալի՛ պայմաններում բռնկած կոխվը իր թափումն եր.

Եթայց առաւել քան զայսոսիկ խոռվշացն վտանգ խոշտանգանաց զնոսա կորուսանէր, զի ըմբռնեալքն ի ձեռաց նոցա ի հարուած անհնաւրին չարչարանաց տանջեալ լինէին, թէ զուցէ գտցի ինչ առ նոսա կերակուր: . . . Եւ զայս (Նկարագրված խոշտանգումները) ոչ միայն ի թշնամին՝ այլև ի մարդու մերձաւորս և յընկերակիցս և ի ծանօթս էր տեսանելի եւ այսպիսի խոր խոռվութիւն պատէր զքաղաքօք, և գիշեր լէ մահուամբ զգիւղիւք և զգերդաստանօք. և մարմինք մերկք ընկեցեալ կային ի փողոցս և ի հարապարակս. և տեսիլ սարսափելի անարգութեան տային տեսողացն, որպէս զի ոչ ևս ոք կարէր տալ զնոսա գերեզմանոց:» (Հովհ. Դրասի. Գլ. ԾՊ. եջ 331):

Արեմայան Յերոպայում գյուղացիական շարժումներին ընկերացի ևն գրեթե միշտ համաճարակ և սով:

Պատմիչի Նկարագրությունները չեն կարող վոչ մի կասկած թողնել, վոր իրապես սա մի ընդհանուր գյուղացիական ապստամբություն եր:

### III.

Այժմ հարց և առաջանում. արդյոք այդ ապստամբական շարժումները կրոնական գրոշի տակ կատարվէլ են, ինչպիս այդ տեսնում ենք հարեան Պարսկաստանում և առաջավոր Արևելքում, վորի մասին ինչպիս վերև հիշատակեցինք, խոսում եւ ակագ. Բարտողը:

Հովհաննես պատմիչի մոտ ունենք այսպիսի մի մուլթ պարբերություն այն գլխի սկզբում, վորտեղ նկարագրվում եւ այդ ապստամբությունը.

«Եւ ապա խոռն ընդ նոսին ևս տեսազակք (մի այլ որինակում սամիկք) և սրիկայք ելին ի մարտու ընդ երկրի մերում, և բազում ինչ այն էր՝ որ ի նմանէ անցք ընդ աստուածաշէն եկեղեցիս անցանէին յեղծումն և ի խոպանումն և յապականումն վարակեալ:»<sup>1)</sup>

Պատմիչը մեզ չի հայտում թե ովքեր եյին այդ «ավագակները» և սորիկանները: Միայն վորոշ ե, վոր նրանց հարվածները ուղղվել են առաջին հերթին յեկեղեցիին զեմ:

Ասողիկ պատմիչի մոտ այս մասին կարդում ենք հետեյալ շահեկան վկայությունը.

«Եւ յետ նորա (Մաշտոց կաթողիկոսից) նստի յաթոռ հոյրապետութեան յթիջ (897 թ.) թուականին Տէր Յովհաննէս ի Դուինայ, ճարտասան և պատմագիր՝ ամս իի (22): Յաւուրս սորա երևեցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհաւան գեղջէ ի ծաղկուն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց:»<sup>2)</sup>

<sup>1)</sup> Համբ. Գատիս, Գլ. ԾԲ. եջ 321/22

<sup>2)</sup> Ասողիկ, III Գլ. Գ. եջ 160

Յեթե Հովհ. պատմիչի մոտ հիշատակված «ավագակները» և սորիկանները Ասողիկի հայտնած թոնդրակեցիներն են, այն ժամանակ վերել դրած հարցի պատասխանը տրվելու յի դրական իմաստով և այդ կերպով թոնդրակեցիների աղանդի հասարակական նշանակությունը կստանա բոլորովին նոր բովանդակություն:

Ֆեոդ. Հայաստանում առաջացած այդ կրոնական շարժումները և նրանց կապը հասարակական շարժումների հետ, գեռ ևս կարու են հատուկ ուսումնական արությունների:

Թոնդրակեցների շարժման մասին զրված մեղ ծանօթ նորագույն ուսումնասիրությունը հանդիսանում է պրոֆ. Լեոյի հողվածը, տպագրված «Նորք» թ. 1-ում, Լեոն, մեր կարծիքով, կրկնում և այն սխալը, վոր կատարել և Զամշյանը Սմբատ Թոնդրակեցին ժամանակակից դնելով Հովհաննես Ոլայեցի կաթողիկոսին (833—855 թ. թ.):

Մենք հեռու յենք մտածելուց, թե Մանիքյան, Պավղիկյան և թոնդրակեցների կրոնական շարժումները միմյանց հետ իդեական կապ չեն ունեցած: Այնքան, վորքան այդ շարժումները ուղղված եյին շահագործող գաւակարգի պաշտոնական կրոն հանդիսացող իդեոլոգիայի զեմ, նույն չափով և ուղյուն շարժումները կրոնական ձեր տակ ունեցել են ներքին սերտ կապ քանի զոյություն ունեցին շահագործման այդ պայմանները: Յերեկ այս տեսակետից յելնելով, Լեոն միացնում է ժամանակագրական կարգով Թոնդրակեցներին Պավղիկյան աղանդավորներին:

Սակայն, չպետք և մոռանալ մի կարեսը հանգամանք, վոր ամեն մի հեղափոխական շարժում ունի իր ստատիկ վիճակը, քանի քաղաքական և տնտեսական պայմանները ձեռնտու չեն այդ շարժման ակտիվ արտահայտության: Մեր կարծիքով նման մի անհպատ շրջան եր հեղափոխական շարժումների համար ֆեոդ. Հայաստանի 1X դարը, մասնավորաբար այդ դարու 30—50-ական թվականները: Այս յեղակացության են հասցնում մեղ հարկերի գանձման և հողային սեփականությունների շուրջը կատարած մեր ուսումնասիրությունները:

Սմբատ Թոնդրակեցին հանդիսանում է վոչ թե միայն նոր զաղափարների քարոզիչ, այլ և այդ զաղափարները կյանքում իրագործելու համար ձգառդ ուժեղ մի մարտնչող, Այլ կերպ՝ սկսած Անանիա Նարեկացիից, Գր. Նարեկացիից մինչեւ Գր. Մագիստրոսը նրա զեմ մղված արշավանքները իմաստից զորկ պիտի լինեյին:

Յեթե 1X դարու 30—50 թվականները անհպատ եյին շահագործողների զեմ ակտիվ պայքարի գործ գալու, ապա X դարու առաջին յերկու տասնամյակները, վերև մեր ասածներից յելնելով, ներկայացնում եյին մեր մատնանշած յերկու իսկական պայմանները, ուժեղ շահագործում և Եշվողների կրիտիկական դրություն:

Նույնպիսի կրիզիս եր ապրում Հայաստանի ֆեոդալական զասակարգը XI դարու կեսին և այդ շրջանում եւ նույն թոնդրակեցիների աղանդավորական շարժումը ստանում է լայն ծավալ, վորի զեմ արշավանք և կաղ-

մակերպվում բյուզանդական պահանջակատար Գր. Մագիստրոսի կողմից 1051—1054 թվականներին: Այդ շարժման մասքանությունները կարում ենք Արիստ. Լաստիվերտացին մոտ (Գլ. ԻԲ. ԻԳ. Եջ 95—108): Այս շարժումը պատկանում է պատմական մի այլ եպոխայի և կազմում է առանձին ուսումնասիրությունների նյութ:

Այժմ անցնենք հարցի փաստական և ողմի քննության: Վերև ասացինք, թե Ասողիկ պատմիչը Սմբատ Թոնդրակեցին ժամանակակից և դուռմ Հովհաննես Դրասխանակերտացի կաթողիկոսին, իսկ Գր. Մագիստրոս գրում ե.

«...պիդն Սմբրու անիծեալն այն երեցաւ յոււուրս տեառն Հովհաննիսի և Սմբատի Բագրատունւոյ, ուսեալ զշար մոլութիւն յումմենէ պարսկական սժշկէ և յաստեղաբաշխէ մոդէ, զոր Մուջիսիկը կոչքք»:<sup>1)</sup>

Գր. Մագիստրոսի այս վկայության մեջ հիշատակված Հովհաննիսի կաթողիկոսը կարող եր վերաբերվել և Դրասխանակերտացիին և թե Ովայեցիին ինչպես Սմբատը թե Սմբատ Խոստիվանուին և թե Սմբատ I Բագրատունին: Այնինչ Ասողիկ պատմիչի վկայության մեջ վորոշակի ասված և Հովհաննիս Դրասխանակերտացիի ժամանակի մոտին, ապա ուրեմն, Սմբատ I-ի մահից հետո կատարված ապստամբության ժամանակակից:

Գր. Մագիստրոսի այս վկայությունը շահեկան և այլ տեսակետից այլույց և տրվում Հայաստանում սկսած այս շարժման յելակետը, Պարսկաստանը:

Գր. Մագիստրոսը նույն թղթում գրում է նույն հետեւյալը, վոր հիմք և ծառայել հետագա ուսումնասիրողներին այդ շարժման թվականը ճշտելու:

«...Զոր նորին աղանդով կացին ավելի քան զօ. և Հ. (170) ամ մինչեւ ցայս»:<sup>2)</sup>

Հայտնի յեւ, վոր Մագիստրոսի արշավանքը թոնդրակեցիների դեմ սկսել ե 1051—1054 թվականներին:<sup>3)</sup> ուրեմն, ըստ նրա վկայության, այդ շարժումը ընկնում է 881—884 թվականներին:

Կարապետ Տեր-Մկրտչյանը Պաղվիկլյանների մասին զրած իր մանրամասն ուսումնասիրության մեջ, այս կետում, առանց հիմնավորման, ընդունում ե Զամշյանի տեսակետը, ըստ վորի Սմբատ Թոնդրակեցին ժամանակակից և ցույց տրվում Հովհաննիսի կաթողիկոսին:<sup>4)</sup> Մի եական

<sup>1)</sup> Գր. Մագիստրոս, թուղթ կե Եջ 153.

<sup>2)</sup> Գր. Մագիստրոս, թուղթ կէ, Եջ 154. թուղթ կը, Եջ 167. Տեր-Մկրտչյանը սխալում է (Եջ 88), յերբ ցույց տրված թվերից մին զրած մուտք է թե 200 ե.

<sup>3)</sup> Ետ. Խօստանյան, Մագիստրոսի թղթերը, Եջ ԽԵ.

<sup>4)</sup> Կար. Տեր-Մկրտչյան, Die Paulikjaner u. s. w. Leipzig 1893 S. 83. Մագիստրոսի արշավանքի այն վկայությունը, ըստ վորի այդ շարժումը փոխազդում է 821 թ., նշանակություն կարող ե ունենալ միայն կրոնական աղանդների կապը յերեան հանելու տեսակետից:

հանգամանք մոռացության և տրվում. վկայություններ հաղորդողների ժամանակագրական մերձավորությունը այդ իրադարձություններին: Այս տեսակետից առաջնությունը ընկնում է Ասողիկ պատմիչին:

Մաղաքիա Որմանյանը նկատում է իրավամբ.

«... մինչ Ովայեցիին ժամանակը 855-ին կը վերջանա, և Դրասխանակերտացին 897-ին կը սկսի, և ավելի բնական և հետագային հետ կապել ծագման սկզբը, քան թե իր 30 տարի առաջ վախճանված կաթողիկոսին և իշխանակորին հետ, ինչպես սովորաբար կը կրկնվի... Ամեն առթի մեջ անհավանական չէ, ժամանակագրական նկատել Ասողիկի աված տեղեկությունը»:<sup>1)</sup>

Մենք շարժման ծագման հարց չենք հարուցում. այդ կարող եր առաջնությունը մեզ հետաքրքրողը այդ շարժման ակտիվ արտահայտություն ստանալու շրջանն է: Բոլորը համաձայն են այն կետում, վոր այդ շարժումը մեծ ծավալ և ստացել X գարում:<sup>2)</sup>

Ի՞նչ յեղբակացության կարելի և հանգել այս բոլորից հետո: Ուսնենք յերկու հիմնական, պատմական վկայություն: Վորոնցից ժամանակագրական կազմով գովերեցն ավելի մատ կանգնողը, Ասողիկ պատմիչը, թոնդրակեցիների պայքարի շրջանը դում և ժամանակակից մեր նկարագրած ապստամբության: Յերկրորդը, Գր. Մագիստրոսը, տարբերվում է այս կետում: Հետագա ուսումնասիրողներից չորսը, Զամչյան, Տեր-Մկրտչյան, Բարսեղ Վ. Մարգիսյան և Մաղաքիա Որմանյան բաժանվում են յերկու մասի ըստ այս վկայությունների, առաջին յերկուսը Մագիստրոսի վկայության վրա հիմնվելով, զործում են սիալ յերբ Սմբատ Թոնդրակեցին Հովհաննիսի կաթողիկոսին ժամանակակից են դարձնում: Իսկ յերկու վերջինները ընդունում են Ասողիկի վկայության ճշտությունը:

Մեր կարծիքով իրավունք ունեն վերջինները, և Սմբատի շարժումը ժամանակակից եր Հովհաննիսի կաթողիկոսին:

Սմբատ Զարեհավանցին վորպես տեսաբան, թե առաջնորդ եր հանդիսանում 915/16 թվի ապստամբական շարժման՝ յերկրորդական խնկիր և մեր ուսումնասիրության տեսակետից: Եականն այն ե, վոր ապստամբական շարժման զուգընթաց և դում թոնդրակեցիների աղանդի աճումը և ծավալումը:

Այժմ, յերկրորդ եական խնդիրը կայանում է նրանում, թե ի՞նչ եր ներկայացնում իրանից թոնդրակեցիների աղունդը: Անվերջ հալածանքները աղանդավորական այդ շարժման առաջնորդներից վոչ մի գրավոր հիշատակություն չի հասցրել մեզ: Գոյություն ունեն հակառակորդների Գրիգոր Նարեկացիի, Գր. Մագիստրոսի և Արիստ. Լաստիվերտացիի նրանց մասին գրածները:

<sup>1)</sup> Մաղաքիա Ռեմանյան, Ազգապատում մաս Ա. § 736, Եջ 1068. Բարսեղ Վ. Մարգիսյանը ուսումնասիրություն և այն եջ 62) այն կառածն և հայտնում, վոր կարող եր Սմբատ Թոնդրակեցին Հովհաննիսի կաթողիկոսին ժամանակակից իրադարձությունը առաջնորդների վորպեսյանը սիալում է, յերբ Ասողիկի փոխարեն զրում է Ս. Անեցի:

<sup>2)</sup> Կ. Տեր-Մկրտչյան, S. 83.

Այդ վկայությունների ընթիրցումից դալիս ենք հետևյալ յեղբակացությունների.

ա) անխնա պայքար տիրող յեկեղեցիի և կղերական, միտիկ աշխարհայցքի դեմ.

բ) պայքար գոյություն ունեցող գույքային հարաբերությունների դեմ.

շ) պայքար գոյություն ունեցող հստարակական ինստիտուտների դեմ.

Յերբեք զարմանալի չե, վոր ինչպես ֆեոդ. Հայաստանի կղերականները, նույնպես և վեհետիլյան Մխիթարյանը հայոյանք և լուսանք են թափում այդ աղանդավորների վկին: Հետաքրքրական և այս տիսակետից Բարսեղ Վ. Սարգսյանի հետեւյալ զուգահեռը, վոր նո 1893 թվին թոնդրակեցիների աղանդի և սոցիալիզմի միջև քաշում ե.

«Միուլ բանիւ, — նորահնար բառիս ճշշտ հշանակութեամբ, — հին աշխարհի ոչնչականներ էին և ընկերվարականներ, և ամեն բան կուզէին ոչնչացնել:»<sup>1)</sup>

Ի հարկե, միամտություն կը լիներ մեր կողմից սպասել, վոր Մխիթարյան մի վանահայր տարբեր տնտեսական ֆաղերի կոնկրետ անալիզի վրա հիմնված դասակարգութին պայքարի արտահայտության այլ յիշանակներ ըմբռներ, ինչպես և պաշտպան կանգներ սոցիալիզմին: «Դասակարգային գոյությունը կապված է միայն պայքարի վորոշ պատմական ձեռների հետ, վորոնք հատուկ են արտադրության զարգացմանը»:

Վոր իրապես թոնդրակեցիները տիրող գույքային հարաբերությունների դեմ պայքարի եյին մտել տիրող ֆեոդալական դասակարգի հետ, բավական և հիշտակել միայն Գր. Նարեկացիի այն ճոխ ածականները, վորոնք ուղղվում են այդ աղանդավորների հասցեյին.

«Որք են շարք շանց և գումարք գողոց, և գունդք գալլոց և դասք դիւաց, և աղինք աւագակաց և կրյաք կերչաց, և բոյլք բարբարոսաց և խաչանանուաց, և ժողովք չարեաց և արքանց...»<sup>2)</sup>

Բանաստեղծ Նարեկացիի ուժեղ յերեակայության արդյունք այս ածականները անշուշտ իրական հիմք ունեյին: Վերջիշենք, վոր ապստամբությունը նկարագրող Հովհաննես պատմիչը ևս նույն ածականներն են շույլել տարբերությունը միայն նրանում և կայանում, վոր վերջինի մոտ յերեակայության ավյունը անքան զորավոր չեր և չեր կարող յերեիք իր բանաստեղծական ձիրքով հավասարվել միտիկ մեծագույն բանաստեղծ Գր. Նարեկացիին:

«Ավագակներ», «գողեր» անվանվում են. ինչու, վորովհետեւ այդ աղանդավորները քարոզում եյին և պահանջած զեպքում կովում, վոր աշխարհիկ և հոգեոր ֆեոդալների հողերը վերադարձին հողազուրկ դարձած ոյուղացիությունը:

Այս տեսակետից կեօն իրավամբ գրում ե.

«...Սմբատը քարոզում եր նյութապաշտական սկզբունքներ, հա-

<sup>1)</sup> Բարսեղ Վ. Սարգսյան, Աւատամասիրաթյուն և այլն էջ 66:

<sup>2)</sup> Ibid, էջ 112.

վատացնելով, վոր մարդկային բարորությունն աշխարհի մեջ և և վոչ թե յերկնքում, իսկ աշխարհի վրա բարորություն կարելի յե ստեղծել մարդկային ստացվածքներով:»<sup>1)</sup>

Վերջին խնդիրը, վորը հարկավոր և պարզել, կայանում և նրանում, թե արդյոք զյուղացիական այդ ապստամբության սեփականազուրկ դարձած կամ աղքատացած ազնվականներից մասնակցողներ յեղել են:

Հովհ. կաթողիկոսի նկարագրության ընդհանուր բնույթը մեզ հնարագորություն չի տալիս այս հարցին վորոշակի պատասխան տալու. և վոչ ել Սմբատի մասին մեզ հասած վկայություններում այդ մասին տվյալներ ունենք: Սմբատը գյուղացիական ծագում ունի: Սակայն, յերկու հանգամանք մեզ թերեւ հնարագորություն կտան դրական պատասխան տալու այդ հարցին:

1. 915/16 թվին ծագած ապստամբությունը թեև ողարտվում և մի քանի տարի հետո նախկին իրերի զրությունը վերականգնում ե, սակայն այդ շարժումը վոչ թե միայն շարունակվում ե ամբողջ 10. րդ դարու ընթացքում գյուղություն ունենալ այլև 11-րդ դարու 50.-ական թվականներին ուժի թափով կրկին յերեան և գալիս: Յեզ շարժման հետագա ընթացքում մենք հանդիպում ենք իշխանական դասի պատկանող մարդկանց, վորոնք զիսավորում են այդ շարժումը: Անշուշտ վորոշ տնտեսական աղքակներից առաջանում եր այս յերեկույթը:

2. Յեթե շարժման հետագա պրոցեսում իշխանական դասի պատկանողները հիմք ունեյին այդ շարժման մասնակցելու և զիսավորելու, մեր կարծիքով, հողերի կենտրոնացման այն պրոցեսը, վոր կատարված փաստեր արդեն 20.-րդ դարու սկզբին՝<sup>2)</sup>, չեր կարող չանդրադառնալ մի շարք փոքր, մանր ֆեոդալ իշխանների տնտեսական գրության վրա բացասական կերպով: Ուստի, մենք հավանական ենք նկատում 915/16 թվի ապստամբության մեջ մանք սեփականազուրկ դարձած կամ աղքատացած իշխանների մասնակցությունը:

Յեթե Հովհ. կաթողիկոսի պատմած այս գեղքերը կղերական պատմիչներ հատուկ աշխարհայացքի թանձր քողով ծածկված են, ապա մենք ունենք Փեոդալական Հայաստանի մի այլ գավառում՝ Սյունիքում, 915 թվին գյուղացիական ապստամբությունների մասին այլ վկայություններ, վորոնք քաղված են այդ շրջանի փաստաթղթերից և բացորոշ ցույց են տալիս այդ ապստամբական շարժումների գրդապատճառները:


## VI.

Գյուղացիական այդ շարժումները տեղի յեն ունենում Տաթև վանքի շուրջը: Այստեղ մենք գործ ունենք հոգեոր ֆեոդալների կալվածների շուրջը կատարված գեղքերի հետ<sup>3)</sup>:

<sup>1)</sup> Նորք, № 2 1923, էջ 147.

<sup>2)</sup> Հմմատ, մեր հողվածը այդ մասին Հ. Ս. Խ. Հ. Գիտության և Արվեստի հնատիտությունը 1927 թվի № 2 ուժ, էջ 180—190.

<sup>3)</sup> Վորքան մեզ հայտնի յե, գյուղացիական այս շարժումների մասին մինչեւ այժմ գրել ե միայն Զավախաշվիլին վրացերեն լեզվով: «Bulletin de l'université de Tiflis»-ի № 2 ուժ, 1922—1923: Այս աշխատության ծանոթացել ենք մեր 1925 թվին ավարտական շարադրության մեջ այս գյուղացիական շարժումների մասին գրելուց հետո: Զավախաշվիլիի հողվածը կրում է «Մի էջ գյուղացիական շարժումների պատմություններ» հին Հայաստանում գերնագիրը:



Ինչպես աշխարհիկ գեղալների մոտ հողերի կենտրոնացում եր կատարվում, նույնը և տեղի յեր ունենում հողերի գեղալների մոտ. Այս ուղղությամբ վերին աստիճանի առաջ նյութ և պարունակում Սա. Որբելյանի պատմությունը Սյունյաց գավառում գոյություն ունեցող վանքերի և յեկեղեցիների կալվածների մասին: Մեծ մասամբ այդ կալվածները ռպարգեականները եյին աշխարհիկ գեղալների կողմից: Պատահում եյին նաև մասնակի դեպքեր, յերբ աշխարհիկ գեղալների կողմից հողեր ծախու եյին առնվում և նվիրվում վանքերին և յեկեղեցիներին:

Դեռևս Յեղիշե պատմէչի որով, յերեք տեսակի հողային սեփականություններ վրոշակի զանազանվում են միմյանցից.

«Երկիրք եթէ հայրենիք, եթէ պարզեականք և եթէ քսակագինք»:<sup>1)</sup> Ինչպես ստորև կտեսնենք, ապստամբական այդ շարժումները առաջ են դալիս այն պատճառով, վոր սյունյաց իշխանները, ըստ յերեսութիւն, հայրենատեր գյուղացիների հողերը կամայականորեն դարձնում են ռպարգեականները և նվիրում են Տաթեկի վանքին:

Հետեւնք Սա. Որբելյանի կողմից մեկ հաղորդված վավերագրերի բովանդակության:

«Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գրեցի զայս վճիռ իմով ձեռամբս հրամանաւ աստուծազօր իշխանին Սիւնեաց Սմբատայ. զի ենաս մեզ վտանգ տագնապի ի չար և անսաւտուած ելուզակացն որ բնակեալ էին ի Ցուրայ բերդ անուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ի գերայ յոդնաժողով եղբարցն ի զիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ի ծերոցն»:

Հետո պատմվում ե, վոր կրոնավորները փախել են և շնորհիվ Սյունյաց Սմբատ իշխանի ռանսատուած ելուզակներին դեմ ձեռք առած ազգումիջոցների, հնարավոր ե յեղել կարգը վերահաստատել:

915 թվին Հովհաննես յեպիսկոպոսի կողմից կնքված այս վավերագրերը արգելում ե.

«... զի յետ ժամանակաց մի ոք հանդգնեսցի զնոյն ոճիրս գործել: Արդ՝ եթէ ոք հրամանիս մերոյ հակառակի և առնու զթուր ի սուրբ եկեղեցւոյս. և կամ կամի զսուտ քար բերդ անուանել և շինութիւն խորհել, և կրկին հալածում յարուցանել սուրբ եկեղեցւույս, այսպիսին նզովին եղեցի յԱստուծոյ ամենակալէ...»<sup>2)</sup>

Վավերագրերը վերջանում ե մի շարք նզովքներով:

Ի՞նչ եր պատճառը, վոր մի գիշեր գյուղացիները խուժում են Տաթեկի վանքը և փախցնում հակառակոսին ու կրոնավորներին: Միթե «ելուզակներ» են ինչպես հաղորդվում ե մեզ: Գագտնիքը պարզվում ե, յերբ մենք կարդում ենք Ցուրագեցի մի յերեցի թողած վավերաթուղթը, զորը վերաբերում ե Տաթեկի շինության ավարտումից հետո վանքին յեղած նվիրատվություններին: Այդ փաստաթղթում ասված ե.

<sup>1)</sup> Յեղիթե, եջ 159.

<sup>2)</sup> Սա. Որբելյան, 1 գլ. ԽԲ. եջ 294. Փարփ 1859.

<sup>3)</sup> Սա. Որբելյան, 1 գլ. ԽԲ. եջ 295.

«... Շնորհէ (Սյունյաց գահերէց Աշոտ իշխանը) և զթուր՝ բերդովն և ագարակօքն, և զգեստն ծուրայ, և զվանքն... բայց թէպէտև զայս ամենայն գուրս արարին, զբնակիչս բերդին Ցուրայ ոչ կալ ացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենատէր էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ զՃամաղէկս՝ որ մերձ վանիցն էր և նոքան պիսիք էին: Էր և աւազականոց մի բերդ անուն հանդէպ վանիցն, յանկոյս մեծ գետոյն, յափն քարոյն՝ որ Առաւելաղաշտ կոչեն, ի ներքին ուսակին. և զայն ևս ոչ հալածեցին. յորոց՝ վտանգ վոչ սակաւ հասանէր եղբայրութեանն».<sup>1)</sup>

Սա. Որբելյանի 42-րդ գլուխը, վորը նվիրված և Տաթեկի վանքի նվիրատվություններին, նույնությամբ մեջ և բերած Ցուրագիտացի յերեցի թողած այս վավերաթուղթը և ավելացնում և սրան:

«Յետոյ թէպէտ յայլ և յայլ ժամանակու և զայնս ևս սեպհականեցին հայրապետքն».<sup>2)</sup>

Սա. Որբելյանի այր վերջին տողերի իմաստը ստորև կպարզվի:

Ուրեմն, պարզգում ե, վոր «ելուզակները» ուրիշ բան չեն, յեթե վոչ նախկին հայրենատեր գյուղացիներ, վորոնք ուղում են տեր դառնալ իրենց հողերին:

Հայտնի յի, վոր Տաթեկի վանքը սկսվել և շինվել 895 թվին և ավարտել 906 թվին:<sup>3)</sup> Յեթե վանքին յեղած հողային նվիրատվությունները նրա ավարտման թվականին և յեղած և «հայրենատեր» գյուղացիները սեփականագուրկ գարձած, ապա հարց և առաջանում՝ ինչու այդ գյուղացիները ապստամբում են միայն 915 թվին:

Մեր կարծիքով, սրա եական պատճառը կայանում ե, հավանաբար, այն ընդհանուր կրիզիսում, վորի մեջ ապրում եյին Հայաստանի Փեղակաները 915 թվին: Ուժերի անհավասարակշունդից գյուղացիները ստիպված են յեղել յենթարկվել իշխանի կողմից յեղած կարգադրություններին և հարմար ըոպեյին նրանք կամեցել են վերականգնել իրենց անցյալի իրավունքները: Յեթե մեր այս յենթարկեցունց ճշմարիտ ե, ապա Սյունիքի զեպքերը արմիջականորեն կապվում են Բագրատունյաց հողամասերում տեղի ունեցող ապստամբական շարժումների հետ:

«Այրաբատն ըլլալով իբրև սիրտ Հայոց Մեծաց, — զրում և Բարսեղ վ. Սարգիսյանը, — Թոնդրակեցւոց աղանդն ալ տյդ սրտին մէջ բունեալ վարակիչ հիւանդութիւն մի, ընդդարձակ և անխուսափելի վանդներ կըսպառնայր շուտով ապականելու ամբողջ մարմինն են».<sup>4)</sup>

Մեզ հայտնի չե, թե արդյոք թոնդրակեցիների աղանդը Սյունիքում ևս տարածված եր՝ թե վոչ: Վորոշ կասկածի տեղիք և տալիս մեղ Սա. Որ-

<sup>1)</sup> Ալիօս, Սիսական, եջ 246.

<sup>2)</sup> Ս. Որբելյան, 1 գլ. ԽԲ. եջ 276.

<sup>3)</sup> Ս. Որբելյան, 1 գլ. ԽԲ. եջ 269—270 և գլ. ԽՊ. եջ 280.

<sup>4)</sup> Բարսեղ վ. Սարգիսյան, ուսումնամիջություն և այլն, եջ 72.

բելյանի հետեւալ պարբերությունը, վոր վերաբերում և գյուղացիների Տաթեա վաճքում կատարածներին.

«...տարան և արծաթի սափորով զմեռոնն և վայթեցին ընդ քարն»<sup>1)</sup>  
Ցուրագեցի յերեցի փաստաթղթում վոչ միայն Ցուրա բերդի բնակչների դեմ գործ եր ածվել անիրավություններ, այլ և Տամազեկի և Արևալադաշտի բնակիչների հանդեպ: Արդյոք այդ վայրերի գյուղացիությունը լուսավոր տարբել է իրենց դեմ գործ ածված անիրավությունը:

Այդ մասին ունենք ուրիշ հետաքրքրական վավերագրեր Ստ. Որբելյանի մոտ:

«Էր և հանդէպ վանիցն տեղի մի ապստամբաց, որ Տամալէկի կոչին. և բաղում և մեծամեծ վիշտ և նեղութիւնն հասուցեալ էին վանիցն, զոր Տէր Ցովհաննէս, թէկ բազում անգամ ջանաց, ոչ կարաց հալածել զբնակիչն և սեպհականել զտեղին»:<sup>2)</sup>

Որեմն, Հովհաննէս յեպիսկոպոսի ժամանակ, Տամալէկի բնակիչներն ել վառքի յեն կանգնել և հաղթանակել Սակայն, Հովհաննէս յեպիսկոպոսի հաջորդը, Հակոբ յեպիսկոպոսի (918—959 թ.) որով Տամալէկի հողերը անցնում են Տաթեա վաճքին:

Նրա կողմից թողված մի վավերագրում կարդում ենք.

«Այս իմ ձեռին գիր է Տէր Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի. բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի զՏամալէկի որ բազում նեղութիւն էին հասուցեալ տասնու. և Տեառն Ցովհաննէսի ջանացեալ էր և չէր կարացեալ թափել. Արդ՝ հնազանդեալ մեր հրամանացս տէր Սմբատ և Սոփիա տիկին՝ առին ընդ դնոյ 1000 դահեկանի, և ետուն ի սուրբ նշանս»:<sup>3)</sup>

Ի նշի յե հանգում Առավելադաշտի բնակիչների ապստամբությունը: Ստ. Որբելյանի մոտ 930 թ. մի վավերագրից իմանում ենք, զոր Արեալադաշտի գյուղացիները ևս ապստամբել են և մի շարք չարիքներ հասցըն:

«...յայնժամ ինզրէ եպիսկոպոսն յիշանացն դարսն. և քանդեալ աւելեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ արար և զտենին սահմանովն սեպհականնեաց եկեղեցւոյն...» (Ստ. Որբելյան, I գլ. Խթ. եջ 303):

Հետագա տարիներին վերաբերող վկայությունները ցույց են տալիս, զոր բոնի ուժով ինեղիված այդ ապստամբական շարժումները պարբերաբար կրկնվում են, այսպես, Ցուրա բերդի բնակիչները հարձակվում են Հակոբ չեպիսկոպոսի վրա և սպանում նրան:

(Ստ. Որբելյան, գլ. Խթ. եջ 296):

<sup>1)</sup> Ստ. Որբելյան, I գլ. Խթ. եջ 293.

<sup>2)</sup> Ստ. Որբելյան, II գլ. ԾԱ. եջ 13.

<sup>3)</sup> Ստ. Որբելյան, II գլ. ԾԱ. եջ 14: Բըսուն Որբելյանի ֆրանս. Ժարգմանու, թյան, մեջ ման մի ցեղ եր: Բըսունի այս կարծիքը հաստատվում է թերեւ նրանով, զոր Սյունյաց իշխանը Ցուրա բերդի և Տամալէկի բնակիչների հանգեպ յերկու չափ և գործածում:

916 թվականից 83 տարի անց կրկին մենք հանդիպում ենք Ցուրա բերդի մասին մի վավերաթղթի, վորտեղից յերկում ե, զոր յերկար տարիների ընթացքում Ցուրա բերդի բնակչության և Տաթեա վանքի միջև պայքարը շարունակվելիս և յեղել: Վերջին կովում արյան մեջ և խեղդվում ապստամբությունը. «...և ոչ ինչ շահնեալ որդալից սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէութեան: Իսկ ի ժամանակս մեր հրամայեցին աւերեալ յատակելը») (Ստ. Որբ. գլ. Խթ. եջ 297.):

Այսպիսս և վերջանում այն ապստամբությունների յերկար շարանը, վորոնք սկսվել եյին 915 թվականից: Ցեկեղեցիի հայրապետները կարողանում են սեփականացնել զյուղացիության հողերը և այս կերպ «փառաբանության» են արժանանում հոգեոր ֆեոդալների կողմից: Իսկ ապստամբությունները ճնշող ֆեոդալ իշխաններն ու թագավորիկները դառնում են «աստուածասեր» և «բահպաշտ»:

Սյունիքում կատարված այս ապստամբությունները հետաքրքրական են նաև 10-րդ դարու Սյունիքի գյուղացիության շերտավորումների տեսակետից: Հայաստանի լեռնային այդ մասի վորոշ վայրերում կար գեռես գյուղացիական մի այնպիսի խավ, զոր կարողացել եր պահպանել մինչև 10-րդ դարու սկիզբը իր հողային սեփականությունը: Ցերկարգործների մի շերտ, զոր չեր գարձել սեփականացուրել նման այն զյուղացիության, զոր աստիճանաբար կուլ եր գացել աշխարհիկ և հոգեոր ֆեոդալների:

10-րդ դարու այս ապստամբական շարժումները մինչև այժմ լուսավոր կամ նրանք անվանվել են «հայ գյուղացի ավազակների ասպատակություններ»: Այսպիսս և գրվել մինչև այժմ Հայաստանի պատմությունը:

Հարց և առաջանում. ինչ՞ու:

#### V.

«Ժամանակակից մատերիալիստական գիտության տեսակետից, — զրում և պրոֆ. Լեռն իր նորագույն հոգվածներից միում, — հայոց պատմություն գեռ գրված չե: Պետք և նրան գրել նորից, այլապես մենք կմնանք առանց պատմության, քանի զոր յեղածը, ավանդականն այլևս վոչ վոքի չի հետաքրքրի»<sup>2)</sup>:

Հեշտ բան չի նման մի խոստովանություն այնպիսի մի մարդու կողմից, զոր իր կյանքն և գրել նորյն այդ «հայոց պատմությունը» հետազոտելու համար:

Ավելի զգուշավոր, սակայն, ըստ եռթյան նման դատավճիռ և տալիս պրոֆ. Հակ. Մանանդյանը մինչև այժմ Հայաստանի պատմության շուրջը

<sup>1)</sup> Այս վավերագրի ժամանակը վորոշելիս, մենք նկատի յենք ունեցել Սյունյաց վասակ թագավորի ժամանակից թողված մի այլ վավերագրի, զոր կրում ե 998 թվականը. հմմա. Ստ. Որբ. գլ. ԾԱ. եջ 36:

<sup>2)</sup> ԱՅՍ, Հայոց պատմության հարցերից. Պետ. Համալսարանի Գիտ. Տեղեկագիր № 2-ը, եջ 398.

գրված աշխատությունների մասին, բայց մոնոպրաֆիկ ուսումնասիրությունների բնույթ կը լուսաբարձրացնելու աշխատություններից<sup>1)</sup>։

Միանգամայն միանում ենք այս դատավճռին։ Անշուշտ, այս գնահատականը իր ամբողջությամբ չի վերաբերում այն աշխատություններին, վորոնք զուտ բանասիրական բնույթ են կրել, և վորոնցից ոգտվում ենք ներկայիս վորակն մատերիալ։

Ինչու ժխտվում ե հայ պատմագրության անցյալը, վորպես իսկական Հայաստանի պատմություն։ Մեր կարծիքով, վոչ թե միայն նրա համար, վոր այդ աշխատությունները լոկ ռժամանակագրության բնույթ» են կրում, վոր նրանք «թագավորների, իշխանների և հոգևորականների պատմություն են», — այս կիններ փորձալ մերձեցում, այլ և նրա համար, և սա ամենաշականն ե, վոր այդ աշխատությունները տողորպած են շովինիզմի հասնող նացիոնալիզմով։ Իսկ այս խտացումն և այն աշխարհայացքի, վոր հատուկ ե հայ բուրժուազիային։ Ահա թե ինչու այդ աշխատությունները լույս են տեսել և հովանավորվել այսպիսի վայրերում, ուր մեծ թվով զաղությին հայ բուրժուազիա յե գոյություն ունեցել, թիֆլիս, Բագու թե Մոսկվա, Վենետիկ թե Վիեննա իրագործում եյին միենույն նպատակը։

Գաղութային հայ կապիտալը, սկզբնական շրջանում առեւրական կապիտալը, մըցության մտնելով և հալածվելով ոտարերկրյա կապիտալների կողմից, սեփական հայրենիք ստեղծելը իր հիմնական նպատակն եր դարձնում։ Պատահական չե, վոր այս իդեայի իրականացման ազդանշանը տալիս եյին վերջին վարերում, առաջին հերթին չնդկաստանի հայ առեւրականները, վորոնց գործի շարունակողը հանդիսանում է հետագա թվականներում, այլ զաղությային կենարոնների հայ բուրժուազիան։

Իսկ հայ բուրժուազիան առանձին անկարող եր կատարել իր առաջարած նպատակը։ հարկավոր եր ամբողջ հայ «ազգը» առանց դասակարգի և կրոնի խտրության, համախմբել ա, դ նպատակի իրագործման շուրջ։

Մեզ շատ հեռու կտաներ այս յերկույթի սոցիոլոգիական վերլուծումը Բավականանում ենք շեշտել այն մի քանի հիմնական գծերը, վորոնք հատուկ են յեղել անցյալի պատմագրության և վորոնք անհրաժեշտ եյին հայ բուրժուազիայի առաջադրած նպատակը իրագործելու։

ա) Ոտարատյացություն ուսսայական թերիայի կիրառման ուղիով։ բ) Վողը հայերի անմիաբանության մասին. գ) Պատմական դեպքերում անհատների հերոսացում, աստվածացման հասցնելու աստիճան. դ) Առաջարում մի պատմական միսսիա հայ ժողովրդին Առաջավոր Արեկելքում կատարելու և վերջապես,

յե) Հայաստանի պատմության ընթացքում, հայ ժողովրդի ներսում դասակարգային հակամարտությունների ժխտում։

Արժեր այս վերջին կետի վրա կանգ տոնել քանի վոր անմիջական կապ ունի մեր այս ուսումնասիրության հետ և պատասխանելու յե մեր դրած հարցը։

<sup>1)</sup> Հակ. Մանանդյան, գիտողություններ և այլն. Գետ. Համալս. Գիտ. Տեղեկագիր № 1, եջ 3.

Մենք ասացինք արդեն թե ինչու հայ բուրժուազիային հարկավոր եր աշղպը» ամբողջությամբ հավաքել իր առաջադրած նպատակի շուրջը։ Իսկ այս բանին կնպաստեր մեծ չափով և այն, յերբ պատմականորեն ժխտվեր դասակարգային ներհակությունները հայ ժողովրդի ներսում։

«Մենք ել ունեյինք մեր հայրենիքը, վոր մեր հորերից մնացել եր մեզ վորպես ժառանգություն, այդ հողի վրա վորպես մեր սեփական տան մեջ, մենք ազատ վարում եյինք, ցանում եյինք, հնձում եյինք ու հանգիստ ապրում եյինք։ Այստեղ մենք ունեյինք մեր որենքները և մեր կառավարությունը։ Մեր բազավորը, վորպես ազգային մեծ ընտանիքի հայր, իշխում եր մեզ Վրա» (ընդգծումը մերն ե Հ. Զ.։)։

Ռաֆիի կողմից «Դավիթ բեկի» հերոսներից մեկի բերանում դրված այս խոսքերը վիպական խոսակցություն չե, այլ պատմաբանների կողմից պաշտպանված թեղիս։ Այս եր թելազրում 19-րդ դարու 80-ական թվականների հայ առեւրազիան կապիտալի շահը։ Երա եկեկտիկ իդեոլոգները և պատմաբանները անշուշտ կարգացել եյին մի քանի անգամ հայ պատմիչները։ սակայն, այդ պատմական փաստաթղթերից վերցրել են միայն այն, ինչ վոր նպաստավոր եր հայ բուրժուազիայի շահերը պատմական փաստերով։ հիմնավորելու։


Թե վորքան ռհանգիստ և ազատ եր ապրում հայ գյուղացին իր սեփական հողի վրա և թե ինչպես հայ թագավորը վորպես մեծ ընտանիքի հայր իշխում եր, այդ տեսնում ենք այս և մեր այլ ուսումնասիրությունների մեջ։

Հայաստանի պատմության մեջ ուեակցիոն ոսմանտիզմը, վորի վերջին տասնամյակների թութակ ներկայացուցիչները հանդիսանում են դաշնակցականները, կրկնելով Միհիթարյան վարդապետներից մինչև Մորգանի կողմից գրված «պատմությունները», մի հարց և ասաջադրել և լուծել։

Հայաստանի պատմությունը ջնջելու անհեթեթ հարցը։ Յեկել իրապես, ինչպես կ. Մարքսն և Նկատում, «...ջնջել բոլոր այն տարրերը (ձորագություն, առանձնաշաշումնություն, անարխիա) ֆեոդալական շրջանում, վորոնք պայքարն են առաջացնում, բուրժուազիայի զարգացումը իր սաղմում խեղդած պիտի լինելու։ Պիտի առաջադրելին պատմությունը ջնջելու անհեթեթ հարցը<sup>1)</sup>։

25 VI 1928 թ.

<sup>1)</sup> K. Marx, Das Elend d. Philosopie im 19. Jahrhundert, 1923, S. 105.



ՀՀ Ազգային գրադարան



NL0418468

7929